



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

**ՀՐԱՄԱՅՈՒՄ**

No \_\_\_\_\_

« »

2021


**«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կրթության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ մասով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

Հաստատել «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողական խորհրդի կանոնադրյունը՝ համաձայն հավելվածի:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

 Invalid signature

X



Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված  
Կրթության, գիտության,  
մշակույթի և սպորտի նախարարի  
2021 թվականի փետրվարի ---ի  
N -----՝ հրամանի

Ընդունված է Վանաձորի պետական  
համալսարանի ՈՒՆ  
Ընդհանուր Ժողովի կողմից  
2021 թվականի փետրվարի 02-ին

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### «ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆԹԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

#### 1. Ընդհանուր դրույթներ

1.1 Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի (այսուհետ՝ ՎՊՀ) ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ՈՒՆ) ՎՊՀ-ում գործող ուսանողական կազմակերպություն է, որը սովորողների ինքնակառավարման, ընտրովի ներկայացուցչական մարմինն է:

1.2 ՎՊՀ ՈՒՆ-ն ապափառապահական և ապակուսակցական կազմակերպություն է:

1.3 ՈՒՆ-ն արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը:

1.4 ՈՒՆ գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՎՊՀ-ի կանոնադրությամբ և ուսանողական խորհրդի կանոնադրությամբ:

1.5 ՎՊՀ-ի ուսանողական խորհրդի կանոնադրությունն ընդունվում է ուսանողական խորհրդի բարձրագույն ղեկավար մարմնի կողմից և հաստատվում Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

#### 2. Նպատակները և գործունեության հիմնական ուղղությունները

2.1 ՎՊՀ ՈՒՆ-ի նպատակներն ու խնդիրներն են՝

- 1) պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,
- 2) ապահովել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը,
- 3) համալսարանի կառավարման համապատասխան մարմինների ֆնանսավանդակում ներկայացնել ուսանողության առնչվող հարցեր,

4) մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,

5) իրագեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին, նպաստել ուսանողների իրավագիտակցական մակարդակի բարձրացմանն ու ակտիվ ֆադաբացիական կեցվածքի ձևավորմանը,

6) միավորել համալսարանի ուսանողական կազմակերպությունների, ակումբների և միությունների ջանքերը՝ նպաստելու ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և խթանելու ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը,

7) աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,

8) մասնակցել ՎՊՀ տարածքում ներքին կարգապահության պահպանմանը,

9) ինչպես նաև լուծել սույն կանոնադրությունում չնշված ուսանողներին հուզող խնդիրները:

**2.2 ՎՊՀ ՈՒՆ-ն** իր գործունեությունը ծավալում է՝ ելնելով սույն կանոնադրության **2.1** կետում նշված նպատակներից ու խնդիրներից:

**3. ՎՊՀ ՈՒՆ կառավարման մարմիններն են՝**

- 1) ՎՊՀ ՈՒՆ Ընդհանուր ժողովը,
- 2) ՎՊՀ ՈՒՆ նախագահությունը,
- 3) ՎՊՀ ՈՒՆ նախագահը,

**3.1 ՎՊՀ ՈՒՆ** նախագահությունը կազմված է ՈՒՆ նախագահից, փոխնախագահներից, ֆակուլտետային ՈՒՆ նախագահներից, ֆարսուղարից և հանձնաժողովների նախագահներից:

**4. ՎՊՀ ՈՒՆ Ընդհանուր ժողովը՝**

**4.1 ՎՊՀ ՈւՆ-ի** բարձրագույն ղեկավար մարմինը համալսարանի ՈւՆ ընդհանուր ժողովն է:

**4.2 ՎՊՀ Ընդհանուր ժողովի** անդամներն են՝ ՈՒՆ նախագահը, փոխնախագահները, հանձնաժողովների նախագահները, ֆակուլտետային ՈՒՆ-ների պատվիրակները:

**4.2.1** Ֆակուլտետային ՈՒՆ-ների պատվիրակ կարող է ընդունվել տվյալ ֆակուլտետի առկա ուսուցման համակարգում սովորող, հասարակական ակտիվություն ցուցաբերող ցանկացած ուսանող՝ փակ, գաղտնի փվեարկությամբ տվյալ ֆակուլտետային ՈՒՆ կազմի կողմից:

**4.3 ՎՊՀ Ընդհանուր ժողովը** գումարվում է ուսումնական տարվա սկզբին: Ընդհանուր ժողովն իրավասու է, եթե նրան մասնակցում է ընդհանուր կազմի **2/3**-ից ավելին:

**4.4 ՎՊՀ ՈւՆ-ի** նախագահության որոշմամբ, ինչպես նաև ֆակուլտետային ՈւՆ-ների անդամների ընդհանուր թվի առնվազն **1/3**-ի պահանջով կարող է հրավիրվել ՈւՆ-ի արտահերթ ընդհանուր ժողով:

**4.5 ՎՊՀ ՈՒՆ Ընդհանուր ժողովի** որոշումներն ընդունվում են մասնակիցների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ՝ փակ, գաղտնի փվեարկությամբ:

**4.6 ՎՊՀ ՈՒՆ Ընդհանուր ժողովի լիազորություններն են՝**

- 1) ընտրում է ՈՒՆ նախագահին,
- 2) լսում է ՈՒՆ նախագահության տարեկան հաշվետվությունը,
- 3) հաստատում, փոփոխություններ և լրացումներ է կատարում ՈՒՆ Կանոնադրության մեջ,
- 4) ֆինանսական և սահմանում է ՈՒՆ-ի տարեկան գործունեության ուղղությունները,
- 5) որոշում է կայացնում ՈՒՆ-ի գործունեության դադարեցման կամ վերակազմավորման վերաբերյալ.
- 6) իրականացնում է ՈՒՆ-ի նպատակներից ու խնդիրներից բխող այլ գործունեություն:

## **5. ՈՒՆ նախագահությունը՝**

5.1 ՎՊՀ ՈՒՆ նախագահությունը կազմված է ՈՒՆ նախագահից, փոխնախագահներից, ֆակուլտետային ՈՒՆ նախագահներից, ֆարտուղարից և հանձնաժողովների նախագահներից:

5.2 ՎՊՀ ՈՒՆ նախագահությունը ղեկավարում է ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակաշրջանում ՈՒՆ աշխատանքները:

5.3 ՎՊՀ ՈՒՆ նախագահության անդամներն ընտրվում են ֆակուլտետների պատվիրակների նիստում, որին լիիրավ ձայնի իրավունքով մասնակցում է ֆակուլտետային ՈւՆ նախագահները՝ փակ ֆվեարկության ներկաների ձայների քվի պարզ մեծամասնությամբ: Նախագահության կազմը հաստատվում է Հնդհանուր ժողովի կողմից: ՎՊՀ ՈՒՆ նախագահության անդամ են հանդիսանում ֆակուլտետային ՈՒՆ նախագահները՝ի պաշտոնե, լիիրավ ձայնի իրավունքով: ՎՊՀ ՈՒՆ հանձնաժողովների նախագահները, եթե չեն հանդիսանում նախագահության անդամ, ի պաշտոնե մասնակցում են նախագահության նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

5.4 Նիստեր է գումարում առնվազն ամիսը մեկ անգամ, որտեղ ֆինանսական և ընթացիկ հարցերը, լսվում են գեկուցումներ ֆակուլտետներում և հանձնաժողովներում կատարվող աշխատանքների մասին: Խորհրդի նախագահի կամ նախագահության 1/3-ի պահանջով կարող են հրավիրվել արտահերթ նիստեր:

5.5 ՎՊՀ ՈՒՆ նախագահության նիստը իրավագոր է եթե ներկա են անդամների առնվազն 2/3-ը: ՈՒՆ նախագահության որոշումներն ընդունվում են նախագահության անդամների 2/3-ի կողմ ֆվեարկելու դեպքում:

## **5.6 ՎՊՀ ՈՒՆ նախագահությունը՝**

- 1) համակարգում է ֆակուլտետային ՈՒՆ-ների գործունեությունը,
- 2) առաջադրում և հաստատում է հանձնաժողովների նախագահներին, իսկ անարդյունավետ աշխատանքի դեպքում՝ անվստահություն հայտնում և դադարեցնում նրանց գործունեությունը:
- 3) առաջադրում է ՎՊՀ կառավարման և այլ մարմիններում ուսանողներին, ինչպես նաև որոշումներ է ընդունում կառավարման տարբեր մարմիններում ուսանողների ներկայացուցիչներին առնչվող հարցերը:

## **6. ՎՊՀ ՈՒՆ նախագահը՝**

### **6.1 ՎՊՀ ՈՒՆ նախագահի գործառույթները՝**

- 1) գործում է սույն Կանոնադրությամբ ՎՊՀ ՈՒՆ-ին վերապահված հարցերի շրջանակներում,
- 2) առնվազն տարին մեկ անգամ հանդես է գալիս ՎՊՀ ՈՒՆ-ի գործունեության մասին հաշվետվությամբ՝ Հնդհանուր ժողովի նիստում,

3) հետևում է ՎՊՀ ՈԻՆ նախագահության որոշումների կատարմանը,

4) վարում է նախագահության նիստերը, ՈԻՆ Հնդհանուր ժողովի նիստերը /եթե չի եղել այլ որոշում կամ առաջարկ/, կարող է հրավիրել նախագահության արտահերթ նիստեր,

5) հանդես է գալիս ՎՊՀ ՈԻՆ անունից,

6) համաձայնագրեր և պայմանագրեր է կնքում ՎՊՀ-ի ՈԻՆ-ի անունից

7) նշանակում է ՈԻՆ ֆարտուղարին:

6.2 ՎՊՀ ՈԻՆ նախագահի լիազորությունների ժամկետը և նրան ներկայացվող պահանջները՝

1) ՎՊՀ ՈԻՆ նախագահը ընտրվում է 2 տարի ժամկետով,

2) ՎՊՀ ՈԻՆ նախագահ կարող է ընտրվել ՎՊՀ առկա բաժնում սովորող ցանկացած ուսանող, որն աչքի է ընկնում բարձր առաջադիմությամբ և հասարակական ակտիվ գործունեությամբ,

3) ՎՊՀ ՈԻՆ նախագահը ընտրվում է Հնդհանուր ժողովի կողմից՝ Հնդհանուր ժողովում ձայների 2/3 մասը փակ, գաղտնի փվեարկությամբ ստանալու դեպքում,

4) անհրաժեշտ թվով ձայներ չհավաքելու դեպքում առավելագույն ձայներ հավաքած երկու թեկնածուները անցնում են երկրորդ փուլ: Երկրորդ փուլում ընտրվում է այն թեկնածուն, ում օգտին փվեարկում է ներկաների պարզ մեծամասնությունը:

## 7. ՎՊՀ ՈԻՆ փոխնախագահը՝

7.1 ՎՊՀ ՈԻՆ փոխնախագահների թեկնածուներ առաջադրվում են նախագահության կազմից:

7.2 ՎՊՀ ՈԻՆ փոխնախագահներից մեկը զբաղվում է ֆակուլտետների ՈւՆ-ների, մյուսը՝ հանձնաժողովների աշխատանքների համակարգմամբ:

7.3 ՎՊՀ ՈԻՆ նախագահի բացակայության դեպքում ՎՊՀ ՈԻՆ նախագահի առաջարկությամբ նրան փոխարինում է ՎՊՀ ՈԻՆ փոխնախագահներից մեկը, ով կատարում է ՎՊՀ ՈԻՆ նախագահի հանձնարարականները:

## 8. ՎՊՀ ՈԻՆ ֆարտուղարը՝

8.1 ՎՊՀ ՈԻՆ ֆարտուղարը ղեկավարում է ֆարտուղարության աշխատանքները, վարում համապատասխան արձանագրությունները:

8.2 ՈւՆ-ի հաստատմանն է ներկայացնում և կազմակերպում ֆինանսական բաշխումները:

## 9. ՎՊՀ ՈԻՆ-ի Ֆակուլտետային Ուսանողական խորհուրդը՝

9.1 ՎՊՀ ՈԻՆ-ի ֆակուլտետային ՈԻՆ-ն ֆակուլտետի ուսանողության ներկայացուցչական, ինֆնակառավարման և նրա ընկերային շահերը ներկայացնող մարմինն է, որը ձևավորվում է ներկայացուցչական սկզբունքով: Նրա անդամները ընտրվում են կուրսերի ժողովներում տվյալ կուրսի ուսանողների ձայների պարզ մեծամասնությամբ:

9.2 ՎՊՀ ՈԻՆ-ի ֆակուլտետի ՈւՆ-ի նախագահը ընտրվում է ֆակուլտետի ՈւՆ-ի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ փակ, գաղտնի փվեարկությամբ: Ֆակուլտետի ՈւՆ-ի ընտրությունները կատարվում է տարեկան մեկ անգամ:

9.3 ՎՊՀ ՈԻՆ-ի Ֆակուլտետային ՈւՆ-ի նախագահի անբավարար աշխատանքի, պարտականությունների թերի կատարման կամ անգործության դեպքերում ՎՊՀ ՈԻՆ-ի ֆակուլտետային ՈւՆ -ի 2/3-ի որոշմամբ կարող է հայտնվել անվստահություն, որից հետո երկօրաթյա ժամկետում ֆակուլտետի ՈւՆ-ը ընտրում է ֆակուլտետային ՈԻՆ-ի նոր նախագահ:

**9.4 Ֆակուլտետային ՈԻՆ-ի լիազորությունները՝**

**1) Ֆակուլտետի ՈԻՆ-ն կազմակերպում է ֆակուլտետի ՈԻՆ-ի աշխատանքները՝**

համալսարանի ՈԻՆ-ի նպատակներին և գործունեության հիմնադրույթներին

համապատասխան: Ֆակուլտետի ՈԻՆ նախագահը ի պատճուհի ներկայացնում է ֆակուլտետի ուսանողությանը համալսարանական տարբեր կառույցներում և օղակներում:

2) Ուսանողներին ընդգրկում գիտահետազոտական աշխատանքներում, սպորտային և գեղարվեստական ինֆրագործունեության խմբերում, զբաղվում է նրանց բարոյագեղագիտական և ազգային-ֆաղափական դաստիարակությամբ:

3) Կազմակերպում է միջկուրսային ստուգատես-մրցույթներ, հանդիպումներ և այլն:

4) Կարող է ունենալ մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ:

9.5 ՎՊՀ ՈԻՆ ֆակուլտետային ՈԻՆ-ն նիստ է գումարում առնվազն ամիսը մեկ անգամ: Արտահերթ նիստ գումարվում է ֆակուլտետի ՈԻՆ նախագահի, ՈԻՆ անդամների 1/3-ի պահանջով կամ ՎՊՀ ՈԻՆ նախագահության որոշմամբ: Նիստն իրավագործ է, եթե նրան մասնակցում են ֆակուլտետային ՈԻՆ անդամների կեսից ավելին, որոշումներն ընդունվում են ներկաների

թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

9.6 ՈԻՆ նախագահը լիիրավ ձայնով մասնակցում է ֆակուլտետի խորհրդի նիստերին:

**10. ՎՊՀ ՈԻՆ հանձնաժողովները՝**

10.1 ՎՊՀ ՈԻՆ-ի նախագահությունում գործում են հետևյալ հանձնաժողովները՝

- 1) իրավական
- 2) գիտաուսումնական
- 3) լրատվության և ֆարոգչության,
- 4) արտաֆին կապերի և հարաբերությունների
- 5) մշակույթի, ազատ ժամանցի և սպորտի

10.2 ՎՊՀ ՈԻՆ-ի հանձնաժողովների նախագահներին առաջադրում և հաստատում է ՎՊՀ ՈԻՆ նախագահությունը, իսկ անարդյունավետ աշխատանքի դեպքում՝ անվստահություն հայտնում և դադարեցնում նրանց գործունեությունը:

10.3 ՎՊՀ ՈԻՆ-ի հանձնաժողովների նախագահներն իրենք են որոշում իրենց նիստերի գումարման պարբերականությունը, դրանց ժամկետները և անհրաժեշտությունը:

10.4 Հանձնաժողովի նախագահը ՈւՆ-ի հաստատմանն է ներկայացնում՝

ա) իր հայեցակարգը սվյալ հանձնաժողովի գործունեության վերաբերյալ,

բ) հանձնաժողովի նախագահի տեղակալի և առնվազն երեք անդամների թեկնածուներին:

10.5 ՈւՆ-ը կարող է ստեղծել ակումբներ, որոնք հաշվետու են մշտական հանձնաժողովներին:

10.6 Անհրաժեշտության դեպքում կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ:

## **11. ՎՊՀ ՈՒՆ-ի անդամների լիազորությունները դադարեցվում են՝**

1) իր դիմումի համաձայն

2) ՈՒՆ անդամի անգործության հիմնավորմամբ

3) ՈՒՆ անդամների ձայների պարզ մեծամասնությամբ

4) այլ բուհ տեղափոխվելիս

5) ուսանողի կարգավիճակը կորցնելու հետևանքով

## **12. Ներկայացուցչությունը ՎՊՀ մարմիններում՝**

12.1 Հոգաբարձուների խորհրդի անդամների թվի **25** (քսանհինգ) տոկոսը կազմում են ՎՊՀ սովորողները, որոնք իրենց լիազորությունները իրականացնում են ՎՊՀ-ում իրենց սովորելու ժամանակահատվածում:

12.2 Հոգաբարձուների խորհուրդի անդամության թեկնածուներ կարող են հանդիսանալ բարձր առաջադիմությամբ (**86** և բարձր **ՄՈԳ**) և հասարակական ակտիվություն ունեցող ցանկացած սովորող:

12.3 Ֆակուլտետի ուսանողները հոգաբարձուների խորհրդի անդամության ընտրությունների մասին տեղեկանում են **7-10** օր առաջ ֆակուլտետային ՈՒՆ-ների կողմից կատարված պաշտոնական հայտարարության միջոցով: Հայտարարության հիման վրա Ֆակուլտետի սովորողները ինքնառաջադրման հայտ են ներկայացնում: Այնուհետև նրանց առաջադրում է ֆակուլտետի ՈՒՆ-ի կազմը և ներկայացնում է Հնդիհանուր ժողովի հաստատմանը: Հնդիհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո ներկայացվում է լիազոր մարմին:

12.4 ՎՊՀ-ի գիտական խորհրդի անդամների թվի **25** (քսանհինգ) տոկոսը սովորողներն են, որոնց առաջադրումը, Հնդիհանուր ժողովի կողմից հաստատումը և թեկնածուներին վերաբերող հարցերը կարգավորվում են սույն կանոնակարգի **12.1, 12.2, 12.3** կետերին համապատասխան:

12.5 Հոգաբարձուների խորհրդում ուսանողական ներկայացուցիչները չեն կարող լինել այն ուսանողները, ովքեր հանդիսանում են ՎՊՀ-ի գիտական խորհրդում ուսանողական ներկայացուցիչներ:

## **13. Ֆինանսական միջոցները**

13.1 ՎՊՀ ՈՒՆ-ի ֆինանսական միջոցները գոյանում են ՎՊՀ հատկացումներից, հանգանակություններից, նվիրատվություններից և ՎՊՀ Կանոնադրությանը, սույն Կանոնադրությանը չհակասող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

13.2 ՎՊՀ ՈւՆ-ը սնօրինում է նյութական և գույքային միջոցներ, անվճար օգտվում է համալսարանի տարածքային և գույքային միջոցներից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է ձեռք բերել և սնօրինել նյութական միջոցներ:

**14. ՎՊՀ ՈԻՒՆ գործունեության դադարումը**

14.1 ՎՊՀ ՈԻՒՆ-ի գործունեությունը կարող է դադարել ՎՊՀ ՈԻՒՆ Ընդհանուր ժողովի անդամների **2/3**-ի որոշմամբ:

14.2 Ընդհանուր ժողովի կողմից **14.1**-րդ կետով նշված որոշումն ընդունելուց հետո սույն կանոնադրությամբ սահմանված կարգով անցկացվում է ՎՊՀ ՈԻՒՆ նոր ընտրություններ: